2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի աշխատանքային հաշվետվություն

Դասվար՝ Շ. Քալաշյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Կրթական

- Առաջնորդվելով ԿԳՍՄՆ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլաններ բոլոր առարկաներից և ներկայացրել հաստատման:
- Տարվա կտրվածքով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսադասերը, բաց դասը իրականացվել է:
- Թեմատիկ պլանով նախատեսված թեմաները լիարժեք ուսուցանվել են: Տոնական և հիշատակի օրերի բացթողումները խտացվել և ուսուցանվել են կիսամյակների ընթացքում:
- Բոլոր աշակերտները դարձել են գրաճանաչ, կատարում են գործողություններ 20-ի սահմանում:
- Ճանաչում են իրեն շրջապատող միջավայրը, կարող են ներկայացնել իրենց: Զարգացել է բանավոր և գրավոր խոսքը:
- 2022-2023 ուստարում մասնակցել եմ վերապատրաստման դասընթացի՝ գնահատման նոր կարգի վերաբերյալ:
- Ուսարվա ընթացքում փորձի փոխանակման նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ, վերլուծվել դրանք:
- Ուստարվա ընթացքում լրացուցիչ աշխատանքներ են տարվել ԿԱՊԿՈՒ աշակերտներ Աշոտ Համբարյանի, Արինա Խաթոյանի և մյուս ետ մնացող աշակերտների հետ: Լրացուցիչ աշխատանքներ են տրվել լավ սովորող աշակերտներին:
- Բոլոր առարկաներից ծրագրերը կատարված են: Տրվել է ամառային հանձնարարություն: